



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾՈՎԱՍՏԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Ծովասար համայնք, 1-ին փ. 45. Հեռ. (0262) 6-35-47
Էլ. փոստ. tsovasar.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 19 » ապրիլի 2019թ. թվականի N 11 – Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾՈՎԱՍՏԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ԼՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 25-րդ ենթակետի պահանջներով և նկատի ունենալով, որ համայնքային ֆինանսական ներդրումներ կատարելու պայմանով 2019թ. ՀՀ բյուջեից համայնքներին հատկացվելու են նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ՝

Համայնքի ավագանին որոշում է.

1. Համաձայնել համայնքի ղեկավարի առաջարկությանը և թույլատրել ներկայացնելու Ծովասար համայնքում մանկապարտեզի կառուցման տնտեսական զարգացման ծրագիրը:
2. Սուբսիդիայի ստացման համար գործող կարգով կազմել և ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան ներկայացնել Ծովասար համայնքի մանկապարտեզի կառուցման տնտեսական զարգացման ծրագրի ֆինանսավորման հայտը:

3. Ծովասար համայնքի 2019թ. բյուջեով, ծրագրի ներկայացման համար նախատեսել բավարար ֆինանսական միջոցներ ծրագիրը իրականացնելու և համայնքային ներդրում կատարելու համար:
4. Սույն որոշումը ուժի մեջ է 2019թ. ապրիլի 19-ից:

Նիստից հարգելի պատճառով բացակայում է ավագանու անդամ՝ Վարդան Հակոբյանը:

Նիստին մասնակցում են ավագանու անդամներ՝

Կողմ (6)
(0)

Դեմ (0)

Ձեռնպահ

Արտավազդ Նազարյան
Զարգանդ Հարությունյան
Լյուդվիկ Մկրտչյան
Կարեն Մարտիրոսյան
Հրայր Հարությունյան
Նաիրի վարդանյան

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՏԱՇԵՍ

ՄԽԻԹԱՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾՈՎԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Ծովասար համայնք, 1-ին փ. 45. Հեռ. (0262) 6-35-47
Էլ. փոստ. tsovasar.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 19 » ապրիլի 2019թ. թվականի N 12 – Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾՈՎԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒՀԻ՝ ԱԳԱՊԻ ԳՈՐԳԻՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

Լսեցին որ, համայնքապետարան է դիմել համայնքի բնակչուհի՝ Ագապի Մանուկյանը դրամական օգնություն ստանալու խնդրանքով:

Զեկուցողը նշեց դիմորդի կողմից ներկայացված դիմումում շարադրված փաստի իսկությունը և սոցիալական անապահով ընտանիքների դիմումների քննարկման հանձնաժողովի կողմից ներկայացված եզրակացությունը առաջարկեց համայնքապետարանի սոցիալական օգնություն ֆոնդից տալ որոշակի դրամական օգնություն:

Զեկուցողի առաջարկությունը պաշտպանեցին ավագանու անդամներ՝ Լյուդվիգ Մկրտչյանը Կարեն Մարտիրոսյանը և Հրայր Հարությունյանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի և «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ կետի համայնքի ավագանին որոշում է՝

1. Համայնքապետարանի սոցիալական օգնության ֆոնդից տալ դրամական օգնություն Ագապի Մանուկյանին 70000 (յոթանասուն հազար) դրամ:

2. Հաշվի առնելով դիմորդի տնտեսական և սոցիալական ծանր վիճակը տրված օգնությունից եկամտահարկ չպահել:
3. Սույն որոշումը ուժի մեջ է 2019թ. ապրիլի 19-ից:

Նիստից հարգելի պատճառով բացակայում է ավագանու անդամ՝ Վարդան Հակոբյանը:

Նիստին մասնակցում են ավագանու անդամներ՝

Կողմ (6)
(0)

Դեմ (0)

Ձեռնպահ

Արտավազդ Նազարյան
Զարգանդ Հարությունյան
Լյուդվիկ Մկրտչյան
Կարեն Մարտիրոսյան
Հրայր Հարությունյան
Նաիրի Վարդանյան

X

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝

ԱՐՏԱՇԵՍ

ՄԽԻԹԱՐՅԱՆ



Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի

Ծովասար համայնք, 1-ին փ. 45. Հեռ. (0262) 6-35-47

Էլ. փոստ. tsovasar.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 19 » ապրիլի 2019թ. թվականի N 13 – Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾՈՎԱՍԱՐ

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱԿԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Լսեցին որ, 2019թ. մարտի 21-ին համայնքաում իրականացվել է վարչական հսկողություն: Վարչական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում հայտնաբերվել է որոշակի խախտումներ, այն որոշակի ժամանակի ընթացքում պետք է վերացնենք:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի պահանջների համայնքի ավագանին որոշում է՝

1. Ղեկավարվելով ՏԻՄ օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ կետի համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման կարգը և անհրաժեշտ ֆինանսական միջոցները ներկայացնել ավագանու հաստատմանը, մեկ ամսվա ընթացքում:
2. Ղեկավարվելով ՏԻՄ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի համայնքի ղեկավարը պարտավոր է 2-օրյա ժամկետում համայնքի ղեկավարի կողմից ընդունված անհատական ակտերը ուղարկել համայնքի ավագանու անդամներին և փակցնել համայնքի ավագանու նստավայրում բոլորի համար տեսանելի տեղում, մեկ ամսվա ընթացքում:
3. Ղեկավարվելով ՏԻՄ օրենքի 35-րդ հոդվածի 4-րդ կետի համայնքի ղեկավարի հաստատման ներկայացնել աշխատակազմի գործավարության կարգը, մեկ ամսվա ընթացքում:
4. Հանրային հատվածի հաշվապահական հաշվառումը վարել կարգին համապատասխան 2019թ. բյուջետայի տարվա ընթացքում:
5. Համաձայն «ՀՀ կառավարության 12-04-2001թ. թիվ 286 որոշում» 44-րդ կետի՝ հողամասը վարձակալության իրավունքով տրամադրվում է մրցույթային կարգով: Մրցույթների անցկացման փաթեթում ներառվում են ինչպես վարձակալության իրավունքի տրամադրման պայմանագրի նախագիծը՝ այնպես էլ մրցույթով տրամադրվող հողամասի հատակագծի նախագիծը՝ որպես պայմանագրի նախագծի հավելված:

Մեկ ամսվա ընթացքում տալ հայտարարություն:

6. Ձեռնարկել միջոցներ մինչև 2021թ. սահմանված կարգով համայնքի գլխավոր հատակագիծը կազմելու ուղղությամբ:
 7. Ձեռնարկել միջոցներ մինչև 2021թ. սահմանված կարգով համայնքի գոտևորման նախագծի կազմելու ուղղությամբ:
 8. 2019թ. 2-րդ եռամսյակում միջոցներ ձեռնարկել սահմանված կարգով համայնքի զարգացման քառամյա /հնգամյա/ ծրագրում գլխավոր հատակագծի և գոտևորման նախագծի մշակման դրույթների ներառելու ուղղությամբ:
 9. Միջոցներ ձեռնարկել համայնքին քաղաքաշինական անձնագիր ունենալու համար:
 10. Համաձայն ՀՀ կառավարության 2015թ. մարտի 19-ի N-596-Ն որոշման 36-րդ և 50-րդ կետերի բացառել առանց տեխնիկական պայմանների ՃՀԱ-ների տրամատրումը:
 11. Համաձայն ՀՀ կառավարության 2015թ. մարտի 19-ի N-596-Ն որոշման 36-րդ և 57-րդ կետերի բացառել առանց ՃՀԱ-ների հողամասի կառուցապատման սխեմայի տրամադրումը:
 12. Համաձայն ՀՀ կառավարության 2015թ. մարտի 19-ի N-596-Ն որոշման 122-րդ կետի անընդհատ երեք օրյա ժամկետում շինթույլտվության և քանդման թույլտվության պատճենները ներկայացնել մարզպետարան:
 13. Համաձայն ՏԻՄ օրենքի 42-րդ հոդվածի 17-րդ կետի և ՀՀ կառավարության 2006թ. նոյեմբերի 26-ի N-1910-Ն 1-ին հավելվածի 9-րդ կետի պահանջների մեկ ամսվա ընթացքում ստեղծել թաղումների և գերեզմանատեղերի զբանգամատյան:
 14. Համաձայն ՀՀ կառավարության 2006թ. նոյեմբերի 26-ի N-1910-Ն որոշման 4-րդ հավելվածի 10-րդ ենթակետի պահանջի գործող գերեզմանատան համար կազմել գերեզմանատների հողերի օգտագործման հատակագծեր և հաստատել:
 15. Համաձայն ՀՀ կառավարության 2006թ. նոյեմբերի 26-ի N-1910-Ն որոշման 4-րդ հավելվածի 15-16-րդ կետերի պահանջների գերեզմանատների մուտքի մոտ մեկ ամսվա ընթացքում տեղադրել գերեզմանատան հատակագիծը, գերեզմանատից օգտվելու կարգը, և գերեզմանատների մաքրության, աղբահանման և պահպանման վերաբերյալ:
 16. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
- Նիստից հարգելի պատճառով բացակայում է ավագանու անդամ՝ Վարդան Հակոբյանը:
- Նիստին մասնակցում են ավագանու անդամներ՝

Կողմ (6)
(0)

Դեմ (0)

Ձեռնպահ

Արտավազդ Նազարյան
Զարգանդ Հարությունյան
Լյուդվիկ Մկրտչյան
Կարեն Մարտիրոսյան
Հրայր Հարությունյան
Նաիրի Վարդանյան

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԽԻԹԱՐՅԱՆ

ԱՐՏԱՇԵՍ